ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ՀՄԱԱՇՁԲ-ԱԻՆ-19/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄԵԿ ԱՆՁՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **04 հունիսի 2019թ.**
Ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ/Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝
Ա. Գևորգյան - ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ
Գնումները համակարգող՝
Ա.Մարգարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ:

1. **ՀՄԱԱՇՁԲ-ԱԻՆ-19/1** ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման մասին.
1.1. Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղարկվել է մասնակիցներին թղթային եղանակով
1.2.Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են թղթային եղանակով.
1.3 **ՀՄԱԱՇՁԲ-ԱԻՆ-19/1** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող աշխատանքների նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գումարը/ՀՀ դրամ/
1.	Լանդշաֆտային աշխատանքներ ճանապարհների և մայրուղիների համար	9 528 000

1.4 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	*Մասնակցի անվանումը*	*Հասցեն,*
1	*«ԳԵՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ*	*Ք.Երևան Բաղրամյան 24 ա*

2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,
2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Հ/հ	*գնման առարկայի անվանումը*	*մասնակիցներ*	*գնային առաջարկները*		
			առանց ԱԱՀ	*ԱԱՀ*	*ընդհ. գինը*
1	*Լանդշաֆտային աշխատանքներ ճանապարհների և մայրուղիների համար*	*«ԳԵՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ*	*9 528 000*	*-*	*9 528 000*

4. Հանձնաժողովը որոշեց.
4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «ԳԵՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն» ՓԲ ընկերությունը ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

4.3 **ՀՄԱԱՇՁԲ-ԱԻՆ-19/1** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

համակարգող՝ _____ Ա. Մարգարյան